



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2011թ. հունվարին /վերլուծություն/

2011թ. հունվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 9631 գործարքներ, որոնց քանակը 2010թ. հունվարի համեմատ աճել է 18.4%-ով, իսկ 2010թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 45.6%-ով:

2011թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2584 օտարման գործարքների 79.8%-ը կազմել են առուվաճառքները, 19.5%-ը՝ նվիրատվությունները և 0.7%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 29.2%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 31.8%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2011թ. հունվարին, 2010թ. դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 43.8%-ով, իսկ 2010թ. հունվարի համեմատ աճել՝ 6.0%-ով:

2011թ. հունվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 63.2%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2011թ. հունվարին, 2010թ. դեկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 60.3%-ով, իսկ 2010թ. հունվարին համեմատ՝ 7.0%-ով:

2011թ. հունվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հունվար 2010թ.	հունվար 2011թ.	դեկտեմբեր 2010թ.
Կենտրոն	473300	439100	440600
Արաբկիր	370800	352400	355800
Քանաքեռ-Զեյթուն	283300	273400	275800
Նոր-Նորք	232400	225800	225800
Ավան	232800	228900	232400
Էրեբունի	246200	234700	239100
Ծենցավիթ	247700	235500	237600
Դավթաշեն	267800	260100	263200
Աջափնյակ	237000	220400	224400
Մալաթիա-Սեբաստիա	234700	219400	223600
Նուբարաշեն	142200	149000	149100
Միջինը Երևանում /բացի Նորք-մարաշից/	269800	258100	260700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. հունվարին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2010թ. դեկտեմբերի համեմատ, նվազել են 1.0%-ով:

2011թ. հունվարին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 240 բնակարաններ, որոնց քանակը, 2010թ. դեկտեմբերի համեմատ, նվազել է 33.3%-ով, իսկ 2010թ. հունվարին համեմատ աճել՝ 13.2%-ով:

2011թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունվար 2010թ.	հունվար 2011թ.	դեկտեմբեր 2010թ.
Արագածոտն	Աշտարակ	142000	135000	136900
	Ապարան	44800	46000	46000
	Թալին	51300	57500	57500
Արարատ	Արտաշատ	94500	94200	95600
	Մասիս	122800	133000	134600
	Վեդի	91700	94900	96100
	Արարատ	90000	84700	84800
Արմավիր	Վաղարշապատ	157000	152700	155500
	Արմավիր	121100	125200	126100
	Մեծամոր	81200	84400	84400
Գեղարքունիք	Սևան	92800	91700	93100
	Գավառ	44300	47600	48300
	Մարտունի	82600	86500	86500
	Վարդենիս	31900	31600	31600
	Ճամբարակ	18900	20600	20600

Լոռի	Վանաձոր	91200	89700	90500
	Ստեփանավան	57100	59800	59700
	Մալտատ	78300	83800	83800
	Ալավերդի	30900	33700	33700
	Տաշիր	34900	37000	37000
	Թումանյան	6100	6200	6200
	Շամլուղ	3400	3400	3400
	Ախթալա	14100	14400	14400
Կոտայք	Աբովյան	158700	145200	147100
	Նոր Հաճն	125800	130100	131800
	Բյուրեղավան	103400	105100	105100
	Եղվարդ	117400	109700	109700
	Հրազդան	62000	61100	62000
	Ծաղկաձոր	181500	177000	177000
	Չարենցավան	78200	76200	76200
Շիրակ	Գյումրի	118400	114100	115800
	Արթիկ	57400	63100	63200
	Մարալիկ	30600	30200	30200
Սյունիք	Գորիս	137400	139000	139000
	Կապան	99600	101200	101600
	Սիսիան	80000	84100	84100
	Մեղրի	57900	62000	62000
	Ագարակ	32800	34500	34500
	Քաջարան	59700	60400	60400
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	70000	72000	71900
	Եղնգնաձոր	107800	110900	110800
	Ջերմուկ	110200	121000	121000
Տավուշ	Դիլիջան	94500	105900	105900
	Իջևան	137300	131000	130500
	Բերդ	42000	42300	42200
	Նոյեմբերյան	33400	34400	34400
	Այրում	24000	24200	24200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2010թ. դեկտեմբերի համեմատ, նվազել են 0.5 %-ով:

2011թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 266 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 64, մարզերում միասին վերցրած՝ 202: 2011թ. հունվարին, 2010թ. դեկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 43.5%-ով, ընդ որում Երևանում՝ 48.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 41.6%-ով: 2010թ. հունվարին համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 11.0%-ով, ընդ որում Երևանում՝ 17.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 8.6%-ով:

2011թ. հունվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հունվար 2010թ.	հունվար 2011թ.	դեկտեմբեր 2010թ.
Կենտրոն	481100	469200	472000
Արաբկիր	376900	379200	384000
Քանաքեռ Զեյթուն	286700	289200	290000
Նորք Մարաշ	283200	275700	276000

Ավան	236400	243100	247000
Էրեբունի	249800	244300	249500
Շենգավիթ	249800	249800	252000
Դավթաշեն	273900	273500	277000
Աջափնյակ	240700	238100	242400
Մալաթիա-Սեբաստիա	239500	234600	239000
Նուբարաշեն	146400	150800	150900
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	278600	277000	279982

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. հունվարին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2010թ. դեկտեմբերի համեմատ, նվազել են 1.1%-ով:

2011թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինագված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունվար 2010թ.	հունվար 2011թ.	դեկտեմբեր 2010թ.
Արագածոտն	Աշտարակ	144100	143000	144000
	Ապարան	47100	48700	49000
	Թալին	53400	57700	57800
Արարատ	Արտաշատ	97600	100000	100500
	Մասիս	124900	138000	139500
	Վեդի	94200	99000	100000
Արմավիր	Արարատ	91500	89700	90000
	Վաղարշապատ	165100	165000	165500
Գեղարքունիք	Արմավիր	123200	131700	132000
	Սևան	94300	96900	98000
	Գավառ	46500	50650	51200
	Մարտունի	85800	89500	89900
	Վարդենիս	34200	34000	34200
	Ճամբարակ	21100	23100	23300
Լոռի	Վանաձոր	96000	97500	97500
	Ստեփանավան	60900	63500	63600
	Սպիտակ	79500	86500	87500
	Ալավերդի	34800	36450	36500
	Տաշիր	38200	40450	40500
	Թումանյան	10400	10800	10800
	Շամլուղ	7400	7500	7500
Կոտայք	Ախթալա	18200	18300	18300
	Աբովյան	161600	160700	162500
	Նոր Հաճն	134100	136500	136800
	Բյուրեղավան	107600	109400	109500
	Եղվարդ	128100	115000	116500
	Հրազդան	64000	65600	66000
	Ծաղկաձոր	303100	317800	318000
Շիրակ	Չարենցավան	80100	80000	80500
	Գյումրի	121400	122500	125000
	Արթիկ	60700	63800	64000
	Մարալիկ	31600	32400	32500

Սյունիք	Գորիս	143500	143700	144000
	Կապան	103700	107400	107500
	Սիսիան	84400	86500	87100
	Մեղրի	59400	64200	64200
	Ագարակ	34700	35800	35900
	Դաստակերտ	10500	10500	10500
Վայոց Ձոր	Վայք	73700	75000	75000
	Եղեգնաձոր	113500	113000	113000
	Ջերմուկ	114400	122800	123000
Տավուշ	Դիլիջան	98900	110000	112000
	Իջևան	139300	135500	136500
	Բերդ	43800	44200	44300
	Նոյեմբերյան	35100	36000	36000
	Այրում	25800	26100	26100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2010թ. դեկտեմբերի համեմատ, նվազել են 0.5%-ով:

Ընդհանուր առմամբ, 2011թ. հունվարին հանրապետությունում օտարվել են 1096 միավոր /497.22 հա/ հողեր, որից Երևանում` 36 միավոր /2.11 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 606 միավոր /447.09 հա/, որից Երևանում` 2 միավոր /0.14 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 352 միավոր /38.27 հա/, որից Երևանում` 25 միավոր /1.34 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 126 միավոր /10.16 հա/, որից Երևանում` 8 միավոր /0.60 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 8 միավոր /1.10 հա/, որից Երևանում` 1 միավոր /0.03 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր` 4 միավոր /0.60 հա/:

2011թ. հունվարին հանրապետությունում օտարված հողերից 992 միավորի /467.32 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում` 27 միավոր /1.56 հա/, նվիրատվության գործարքներ` 92 միավորի /28.34 հա/, որից Երևանում` 7 միավոր /0.35 հա/ և փոխանակության գործարքներ` 12 միավորի /1.56 հա/, որից Երևանում` 2 միավոր /0.21 հա/:

Հանրապետությունում 2011թ. հունվարին, 2010թ. հունվարի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 13.8%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 10.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 21.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ մնացել է անփոփոխ: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում` 98.91 հա, որից 95.57 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 31.1%-ը կամ 309 գործարքներ /161.08 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում` 5 գործարքներ /0.62 հա/, իսկ 68.3%-ը կամ 678 միավորը /305.68 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում` 21 միավոր /0.91 հա/: 2011թ. հունվարին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 5 գործարք /0.56 հա/:

Ստորև ներկայացվում է 2011թ. հունվարին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

	Չնտանցված և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող															
	Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր			
																					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/						
Երևան	0	0.00	0	0.00	4	0.27	1	0.35	2	0.14	1	0.03	17	0.73	1	0.01								
Արագածոտն	13	13.17	1	0.25	4	0.48	4	0.35	36	36.46	0	0.00	10	0.94	0	0.00								
Արարատ	5	27.84	1	0.07	7	0.57	15	0.68	52	17.85	0	0.00	36	2.94	5	0.16								
Արմավիր	22	47.00	0	0.00	0	0.00	4	0.57	51	48.57	0	0.00	28	2.73	3	0.04								
Գեղարքունիք	13	9.02	1	0.02	59	7.23	8	0.25	2	2.89	0	0.00	15	1.25	4	0.75								
Լոռի	5	6.57	1	0.17	0	0.00	19	0.19	117	68.28	0	0.00	19	2.04	3	1.00								
Կոտայք	5	12.23	1	0.31	24	2.18	11	0.35	93	57.73	0	0.00	44	3.35	1	0.02								
Շիրակ	2	4.58	0	0.00	10	0.16	12	0.34	29	29.98	0	0.00	9	1.00	0	0.00								
Սյունիք	1	0.50	2	0.26	5	0.70	7	0.53	52	13.69	0	0.00	6	1.07	0	0.00								
Վայոց Ձոր	19	13.91	0	0.00	1	0.05	10	3.59	6	2.29	0	0.00	5	0.46	1	0.10								
Տավուշ	1	0.03	0	0.00	6	6.26	4	0.08	10	7.04	0	0.00	17	1.56	0	0.00								
Ընդամենը	86	134.85	7	1.08	120	17.90	95	7.28	450	284.92	1	0.03	206	18.07	18	2.08								

Ստորև ներկայացվում է 2011թ. հունվարին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	2	0.07	0	0.00	2	0.07	0	0.00	3	0.56	0	0	0	0.00	2	0.21	1	0.35
Արագածոտն	1	0.02	0	0.00	0	0.00	1	0.02	18	13.25	10	12.20	1	0.25	4	0.48	3	0.32
Արարատ	2	0.08	1	0.07	0	0.00	1	0.01	26	29.08	5	27.84	0	0.00	7	0.57	14	0.67
Արմավիր	2	0.56	0	0.00	0	0.00	2	0.56	24	47.01	22	47.00	0	0.00	0	0.00	2	0.01
Գեղարքունիք	1	0.001	0	0.00	0	0.00	1	0.001	80	16.52	13	9.02	1	0.02	59	7.23	7	0.25
Լոռի	2	0.004	0	0.00	0	0.00	2	0.004	22	5.91	4	5.55	1	0.17	0	0.00	17	0.19
Կոտայք	9	0.92	0	0.00	9	0.92	0	0.00	32	14.15	5	12.23	1	0.31	15	1.26	11	0.35
Շիրակ	5	0.06	0	0.00	5	0.06	0	0.00	19	5.02	2	4.58	0	0.00	5	0.10	12	0.34
Սյունիք	9	0.28	0	0.00	4	0.06	5	0.22	6	1.71	1	0.50	2	0.26	1	0.64	2	0.31
Վայոց Ձոր	1	0.001	0	0.00	0	0.00	1	0.001	29	17.54	19	13.91	0	0.00	1	0.05	9	3.58
Տավուշ	1	0.04	0	0.00	1	0.04	0	0.00	10	6.33	1	0.03	0	0.00	5	6.22	4	0.08
Ընդամենը	35	2.04	1	0.07	21	1.15	13	0.82	269	157.08	82	132.86	6	1.01	99	16.76	82	6.45

Հանրապետությունում 2011թ. հունվարին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքների 4 գործարքներ /1.99 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2011թ. հունվարին, 2010թ. հունվարի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 52.8%-ով: Ընդ որում, Երևանում աճել 3.0 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ աճել 52.0%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 46.4%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 2.3 անգամ, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 22.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 50.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սնփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի ածուրդային վաճառքների					Մասնավոր սնփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մամերնը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մամերնը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	9	11.19	67.5	288.0	99.1	16	6.76	365.0	12000.0	4380.5
Ապարան								86.5	2727.3	626.6
Թալին	1	1.00	158.8	158.8	158.8	15	17.26	93.6	5494.5	545.1
Ծաղկահովիտ						5	12.44	79.5	1000.0	216.0
Արարատի մարզ										
Արտաշատ						15	3.90	335.1	10833.3	2460.5
Մասիս	3	2.84	64.2	4493.4	1584.3	7	5.21	200.0	11904.8	2850.1
Վեդի	2	25.00	505.0	513.3	509.2	24	7.82	207.0	10795.1	1772.8
Արմավիրի մարզ										
Արմավիր	9	4.23	66.1	2352.1	376.8	25	15.64	294.3	9090.0	1430.5
Բաղրամյան	9	41.81	67.1	598.4	231.9	11	19.76	90.6	2561.1	763.5
Վաղարշապատ	4	0.96	153.2	1596.8	514.6	15	13.17	444.4	11764.7	2900.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	12	7.52	55.0	553.3	510.1			199.8	1875.0	370.5
Ճամբարակ	1	1.50	950.0	950.0	950.0			60.5	953.3	315.0
Մարտունի						1	0.15	51.1	2850.0	665.1
Սևան								52.2	2134.8	281.5
Վարդենիս						1	2.74	41.2	2575.1	415.0
Լոռու մարզ										
Ալավերդի						26	23.72	170.4	6424.2	828.3
Գուգարք						81	34.96	234.6	6065.9	935.5
Սպիտակ								250.0	5555.5	655.5
Ստեփանավան	4	5.55	529.7	770.5	601.4	2	1.07	90.6	1686.6	310.0
Տաշիր						4	3.51	45.3	1384.4	157.5
Կոտայքի մարզ										
Աբովյան	4	11.70	62.0	637.5	237.6	20	4.09	279.3	11942.7	4741.2
Եղվարդ	1	0.53	302.1	302.1	302.1	16	13.03	174.4	11971.8	3250.0
Հրազդան						56	40.25	130.5	10256.4	1865.8
Շիրակի մարզ										
Ախուրյան						14	12.89	252.0	1693.1	585.5
Ամասիա						3	5.78	40.9	261.0	137.7
Անի						10	8.48	110.6	546.9	346.7
Աշոցք	2	4.58	262.4	262.4	262.4			58.5	215.8	107.2
Արթիկ						2	2.83	79.4	1428.6	314.5
Սյունիքի մարզ										
Գորիս						45	8.12	92.6	1023.2	586.6
Կապան	1	0.50	84.0	84.0	84.0			120.0	841.6	310.0
Մեղրի								193.0	3000.0	658.3
Սիսիան						7	5.57	46.3	1977.4	386.5
Վայոց Ձորի մարզ										
Եղնգնաձոր	11	3.51	67.5	94.9	70.0	1	0.03	125.0	10000.0	1735.5
Վայք	8	10.40	68.9	385.7	109.3	5	2.26	58.8	1430.7	520.0
Տավուշի մարզ										
Բերդ						5	1.19	213.3	3783.8	620.0
Իջևան	1	0.03	2200.0	2200.0	2200.0			267.5	9454.5	1210.0
Նոյնմբերյան						5	5.85	46.7	7368.4	905.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տնօրոգությունից և հողատնայնությունից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մավերներ /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մավերներ /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	4	4792.0	177.9	180.6	179.9	9	5965.0	130.7	22200.0	2572.5
Ապարան								124.1	609.6	313.0
Թալին						1	3458.0	63.2	1454.8	152.2
Ծաղկահովիտ								60.0	214.3	81.3
Արարատի մարզ										
Արտաշատ	1	1100.0	355.6	355.6	355.6	8	7587.0	173.9	7140.3	894.0
Մասիս	6	4640.0	666.9	686.0	675.8	20	14585.0	187.5	25000.0	1210.0
Վեդի						8	7271.0	126.1	5000.0	662.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						11	13571.0	131.6	9090.9	1215.0
Բաղրամյան						1	1200.0	100.0	833.3	214.0
Վաղարշապատ						16	12490.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	58	71701.0	160.3	319.3	201.4	1	620.0	186.6	1084.3	545.5
Ճամբարակ								71.3	2286.2	149.3
Մարտունի						12	10374.0	119.3	5000.0	275.0
Սևան	1	575.0	1245.0	1245.0	1245.0	1	476.0	240.0	3110.4	262.5
Վարդենիս						1	1000.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Այավերդի						3	1400.0	114.3	1388.9	215.2
Գուգարք								77.9	14083.3	915.0
Սպիտակ						15	14023.0	104.9	1348.3	200.0
Ստեփանավան								88.2	1666.7	170.0
Տաշիր								45.3	400.0	83.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	1	762.0	4319.6	4319.6	4319.6	15	13730.0	264.5	35353.5	1964.0
Եղվարդ	9	6762.0	197.9	5062.5	4238.7	24	17314.0	173.6	27000.0	2835.8
Հրազդան	5	5101.0	272.0	1954.0	854.3	4	1455.0	117.7	34848.5	1322.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	5	986.1	1513.2	8279.6	5786.1	5	3004.8	113.6	18750.0	330.7
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						2	4200.0	67.9	180.6	140.5
Աշոցք								40.8	144.0	60.0
Արթիկ						2	2820.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						3	2170.0	112.2	1700.0	353.0
Կապան	1	6380.0	115.2	115.2	115.2			67.9	2638.9	272.0
Մեղրի								68.5	632.9	170.0
Սիսիան						3	8500.0	123.5	875.0	180.5

Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	510.0	751.0	751.0	751.0	4	4090.0	96.7	7659.6	497.2
Վայք						1	500.0	120.7	1448.3	192.3
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	100.0
Իջևան	3	62128.0	3000.0	3000.0	3000.0	15	12992.0	74.1	14423.1	494.7
Նոյնեբերդյան	2	87.0	1100.0	1100.0	1100.0	2	2580.0	125.0	1948.1	194.0

2011թ. հունվարին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 9 գործարքներ 3.48 հա մակերեսով, ընդ որում 6-ը՝ /3.29 հա/ Կոտայքի, 2-ը՝ /0.09 հա/ Լոռու և 1-ը՝ /0.10 հա/ Արմավիրի մարզերում:

2011թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 481 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.0%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 93.3%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2011թ. հունվարին, 2010թ. դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 41.7%-ով, իսկ 2010թ. հունվարին համեմատ՝ 13.3%-ով:

2011թ. հունվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 26 բնակարանների, 14 անհատական բնակելի տների, 244 հասարակական, 41 արտադրական նշանակության օբյեկտների, 151 միավոր /843.84 հա/ հողերի, 5 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2011թ. հունվարին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 20 վարձակալության գործարքների /այդ թվում 18 միավոր՝ 0.02 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2010թ. դեկտեմբերի և 2010թ. հունվարին համեմատ աճել է 4.0 անգամ: 2011թ. հունվարին հանրապետությունում վարձակալված 843.84 հա հողերից 1.30 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալվել են 842.54 հա հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 437.36 հա, որից 436.83 հա գյուղատնտեսական նշանակության: 2011թ. հունվարին հանրապետության մարզերում վարձակալվել են 840.60 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2011թ. հունվարին հանրապետության մարզերում գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունը.

Մարզի անվանումը	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	12	51.17
Արարատ	4	38.78
Արմավիր	11	12.33
Գեղարքունիք	7	213.01
Լոռի	0	0.00
Կոտայք	4	3.07
Շիրակ	16	34.13
Սյունիք	8	436.83
Վայոց Ձոր	11	48.35
Տավուշ	2	2.93
Ընդամենը	75	840.60

2011թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 918 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.5%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2010թ. դեկտեմբերի համեմատ, նվազել է 70.0%-ով, իսկ 2010թ. հունվարին համեմատ աճել՝ 29.8%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /46.4%/, առանձնատների /23.0%/, հասարակական նշանակության օբյեկտների /13.3%/ և հողերի /10.2%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 403 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2010թ. դեկտեմբերի համեմատ, նվազել է 66.9%-ով, իսկ 2010թ. հունվարին համեմատ աճել՝ 63.8%:

2011թ. հունվարին հանրապետությունում գրավադրվել են 160.09 հա հողեր, որից 3.67 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 94.8%-ը կամ 151.75 հա գյուղատնտեսական նշանակության են, որոց 0.11 հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 103.04 հա, որից 102.85 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2011թ. հունվարին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 88 գործարքներ, որից 65-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 84.1%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 9.1%-ն՝ անհատական բնակելի տների, 2.3-ական%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, հողերի և այգետնակների նկատմամբ: 2010թ. դեկտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 56.4%-ով, ընդ որում Երևանում՝ 56.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 57.4%-ով: 2010թ. հունվարին համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 87.2%-ով, ընդ որում Երևանում՝ 2.3 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ 21.1%-ով:

2011թ. հունվարին հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման գործարքներ չեն արձանագրվել:

2011թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1242 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2010թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 59.0%-ով, իսկ 2010թ. հունվարին համեմատ աճել՝ 26.2%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 12.91%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /25.8%/:

77 կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե